



ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆԸ ԿԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ



Հանավոր գրող ու մանկավարժ Ղազարոս Աղայանը պատկանում է հայ այն պայծառամիտ գրողներին համաստեղովյանը, որոնք իրենց քնարը նվիրել էին աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանությանը: Մեծ է Աղայանի ավանդը հատկապես հայ մանկավարժության ասպարեզում. մի շարք սերունդներ նրա կազմած դասագրքերի օգնությամբ են պրագիտություն սովորել և հաղորդակից դարձել մայրենի գրականությանը: Ժամանակին այդ դասագրքերը համասարապես փրկելի էին և՛ մանուկների և՛ մեծերի համար ու այսօր էլ դեռևս նրանք չեն կորցրել իրենց հետաքրքրությունը: Այդ դասագրքերում էին գետնի վրա Աղայանի մանկական գոյությունը, հրապարակումները, հեքիաթները, գեղեցիկ երգերը: Այդ դասագրքերը միաժամանակ պարունակում էին նաև Ղազարոս Աղայանի մանկավարժական հայացքները, ինչպես և հայ լեզվաշինարարության խնդիրներին վերաբերող նրա տեսակետները: Անդրկովկասի հայաքնակ գրեթե բոլոր վայրերում էլ մեծ ընդունելության էին արժանացել Աղայանի կազմած դասագրքերը և ուսուցչությունը համակիր էր նրա մանկավարժական հայացքներին: Բայց Աղայանը ուներ նաև խավարամիտ շատ թշնամիներ, որոնք քնած չէին և ամեն կերպ աշխատում էին ասպարեզից դուրս մղել նրա կազմած դասագրքերը և խոչընդոտ հանդիսանալ

նրա մանկավարժական հայացքների տարածմանը: Պետք է ասել, որ հայ մեծանուն մանկավարժի թշնամիներին վերջ ի վերջո հաջողվում է այդ բանն անել և նրա դասագրքերի օգտագործումը դպրոցներում արգելվում է:

Վերջերս Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվում մեր կողմից հայտնաբերվեց երկու փաստաթուղթ, որոնք վերաբերում են այս խնդրին: Երկու փաստաթուղթն էլ պատկանում են Հազարոս Աղայանի գրչին: Դրանցից առաջինը հասցեագրված է Մակար կաթողիկոսի տեղակալ Երեմիա եպիսկոպոսին և գրված է 1891 թ. դեկտեմբերի 18-ին: Երկրորդը հասցեագրված է Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերությանը և գրված է 1892 թ. դեկտեմբերի 12-ին: Նկատի առնելով այս փաստաթղթերի կարևորությունը Ղազարոս Աղայանի կենսագրության ամբողջացման համար, ստորև բերում ենք դրանք ամբողջությամբ:

Երեմիա եպիսկոպոսին ուղղված խնդրագրում Աղայանը բողոքում է իր կազմած դասագրքերի գործածության արգելման դեմ, վկայակոչելով կաթողիկոսի թույլտվությունը. մյուս կողմից էլ նա մատնացույց է անում այն բանի վրա, որ իր դասագրքերի արգելումը, ոչնչով հիմնավորված չլինելով, կրում է միայն անձնական թշնամության խմբակային անհաշտության բնույթ: Ահա այդ փաստաթուղթը. —

Նորին Ամենապատուութիւն Տեառն տեղակալի Երեմիա Եպիսկոպոսին

Ամենախոնարհ խնդիր

Թեմական վերատեսուչները՝ Սուրբ Էջմիածնի ուսումնարանական վարչական ժողովի հրամանով շրջաբերական են ուղարկել իրենց թեմերում գտնված բոլոր ուսումնարաններին, որ իմ «Ուսումն մայրենի լեզու» երեք դասագրքերի գործածութիւնը դադարեցնեն, և նրանք էլ դադարեցրել են։ Ամենապատու շայր, այս կարգադրութիւնը պէտք է համարել անարդար, հետևապէս և անվաւեր, որովհետև իմ դասագրքերս գտնւելով հանգուցեալ կաթողիկոսի հաստատած դասագրքերի մէջ, վարչական հանձնաժողովը իրաւունք չունէր թէ՛ դրաւոր և թէ՛ բերանացի պատեհներով արգելել տալ իմ դասագրքերի գործածութիւնը։ Ասում եմ բերանացի պատեհով, որովհետև թէպէտ հանձնաժողովի շրջաբերականում իմ անունս տրւած չէ, բայց Թիֆլիսի թեմի վերատեսչի շրջաբերականում առանձնապէս շեշտւած է իմ անուն և ազգանուն վրայ, որպէսզի վարժապետները պարզ ի պարզոյ իմանան, թէ յատկապէս ում դասագրքերը չը պիտի ընդունեն։ Այս առթիւ ես անձամբ դիմեցի Գեղամեան եղիշէ քահանային և նա ասաց ինձ. — Թէպէտ հանձնաժողովի հրամանում ձեր անունը գրւած չէ, բայց Մանդենեան և Նահապետեան բերանացի պատուիրեցին ինձ, որ ձեր անունը մտցնեմ իմ

շրջաբերականում։ Բանից երևում է ուրեմն, որ մէջտեղ ուղղագրութեան խնդիրը մի պատրասկ է, աչքի ընկնողը աւելի անձնական թշնամութիւնն է և կուսակցական ոգին։ Ենթադրել կարելի չէ, որ նրանց նպատակը եղել է մեր դպրոցների մէջ ուղղագրութեան միակերպութիւն մտցնելը, քանի որ իմ դասագրքերս մէջ տեղից հանելուց հետոյ էլ միս դասագրքերի ուղղագրութիւնը դարձեալ մնում է զանազան, ինչպէս որ զանազան է նոյնիսկ «Արարատ» ամսագրի ուղղագրութիւնը, ինչպէս և միւս լրագրերի։ Եթէ վերջապէս դրանց նպատակը ուղղագրութիւնը լինէր, չէին օգտուել իրենց միակ հայերէնագէտ անդամի բացակայութիւնից և վճիռ չէին կայացնիլ երկուսով, որոնցից և ոչ մէկը հայերէնի ճիշտ ուղղագրութեան ձեռնհաս չէ, ուր մնաց որ. ինչ էլ որ լինի, նրանք իրաւունք չունէին առանց բանի էութիւնը Ձեր Ամենապատուութեանը իմաց տալու, ինքնագլուխ հրաման արձակել և գրկել ինձ իմ միակ ապրուստի աղբիւրից։

Ահա այս թշուառ հանգամանքի վրայ դարձնելով Ձեր Ամենապատուութեան բարեգործութիւնը, խնդրում եմ ամենախոնարհաբար, որ վարչական հանձնաժողովի կարգադրութիւնը անվաւեր համարէք։

Մնամ Ամենապատուութեանդ խոնարհ ծառայ Դազարոս Աղայան

18-ին գեկտեմբերի. 1891 թ. *)

Այս խնդրագրի վրա կա Երեմիա Եպիսկոպոսի հետևյալ մակագրութիւնը. —

«Հանձնեմք ուսումնարանական հանձնա-

Ի 24 յունիսի 1892 ամի

ժողովոյն կարգադրել դարձան մասն գործածութեան ի սմին նշանակեալ դասագրոց ամենախոնարհ ուսումնարանս Հայոց»։

Տեղակալ Հայրապետութեան Երեմիա Եպիսկոպոս

Երկրորդ փաստաթուղթը նույնպէս մի խնդրագիր է։ Այդ խնդրագրում Դազարոս Աղայանը դառնորեն դանդաղում է իր վիճակից։ Նա գրում է. «որ իր դասագրքերի արգելման հետևանքով ինքը զրկվել է «վերջին կտոր հացից» և քաղաքում ալլա ապրելու հնարաւորութիւն չունենալով, գլուխ է տեղափոխվել, սակայն, այստեղ էլ նա ընկել է վաշխառուների ձանկր։ Մանր նյութական վիճակը ստիպում է նրան դիմելու նը-

վաստացուցիչ միջոցների. նա թերթում հայտարարութիւն է տալիս, որ վաճառում է իր աշխատութիւնների հեղինակային իրավունքը։ Թե որքան ծանր էր նրա վիճակը այդ օրերին, երևում է խնդրագրի հետևյալ տողերից. «Բայց այսօր թէև ոչ հոգւով ու սրտով, ոչ խելքով ու մտքով, այլ ֆիզիկապէս ծերացել եմ, նիթական անապահովութիւնից չափից դուրս ճնշւել, շատ անգամ թուլթ ու թանաք անդամ չեմ ունենում»։

Այս խնդրագրում Աղայանը միաժամանակ անողոր քննադատութեան է ենթարկում իր ժամանակի դրական բարքերը, գործողների վաճառութիւնը, «գլխապահու-

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիւ, ֆոնդ N 56, կուլտ-կենցաղային բաժին, գործ N 188, էջ 32։

թեան համար քարշ գալը սրա նրա ետևից», խմբակայնությունը, գրականության գաղափարագրությունը. նա գրում է. «... մեր ժամանակի գրականությունը ապականած է զգելու շահի, դրանում խեղդած է խղճի ու ճշմարտության ձայնը»:

Թե որքան իրավացի էր Աղայանն այս խնդրում, այդ երևում է նրա լավագույն բարեկամ Հովհաննես Թումանյանի հետևյալ տողերից, ուր նույնպես անողոք քննադատություն են հնթարկված այդ ժամանակաշրջանի գրական բարքերը:

«Ինձ, իրան ասեմ,— գրում է մեծանուն հայ բանաստեղծը,— խեղդում է այս մթնոլորտը, չը կայ ընկերական շրջան, չը կայ գրականության մասին խորհող մարդկանց շրջան, որ դեկավար էր երիտասարդներին, չը կայ մի անկիւն, որ տիրած չը լինի ապականությունը, անառակ և ցոփ կեանքը, բռնությունը...»:

Ճշմարտության զինվոր Աղայանը չէր կարող դավաճանել իր պաշտպանած գաղափարներին ու հետևել ծախու գրչականի հայացքներին և դրա համար էլ նա արժանացել էր վերջիններիս կողմից հալածանքի ու հետապնդման: Փշոտ է եղել հայ գրող ու մանկավարժ Ղազարոս Աղայանի անցած ուղին, նա իրեն միշտ մենակ է զգացել և, ինչպես ինքն է ասում, «ամկախ և ինքնուրույն, կրեով ամեն տեսակ գրկանքների և նեղությունների», մշակել է «մի բոլորովին խապանացած անդաստան», միայն իր «ներքին հոգեկան դրդումից»^{*} մղված:

Սակայն ոչ թշնամիների հալածանքը և ոչ

էլ նյութական անապահովությունը չէին կարող ընկճել հայ ժողովրդի ցավերով ու վշտերով տառապող Աղայանի աննկուն կամքը: Ամենածանր պահերին անգամ նա երբեք մոռացություն չի մատնել հայ գրականության, հայ մանկավարժության, հայ ժողովրդի կրթության, մանուկների դաստիարակության հուզող խնդիրները: Հատկանշական է մանավանդ նրա ժողովրդասիրությունը, ժողովրդին օգտակար հանդիսանալու նրա բուն տենչը, իր ուժերը ժողովրդի բարօրությանը ի սպաս դնելու նրա անսահման պատրաստակամությունը: Չնայած իր նյութական անապահովությանը, նա, Հայոց Հրատարակչական Ընկերությանն ուղղած նամակում, առաջարկում է վերջինիս տպագրել իր «Բանաստեղծությունների ժողովածու»-ն ու ցածր գին նշանակել, որպեսզի այն մատչելի լինի ժողովրդական լայն խավերի գնողունակությանը: «Առաջարկելով հարգելի Ընկերությանը,— գրում է նա,— իմ «Բանաստեղծությունների ժողովածու»-ն, խնդրում եմ տպագրեք և աժան գնով տարածեք ժողովրդի մէջ»): Հենց այս ժողովրդասիրությունն էր պատճառը, որ ամենածանր գրկանքների, տաժանելի նեղությունների, անիրավ հալածանքների օրերին իսկ նա երբեք չվհատեց, չհուսալքեց ու ուրիշների նման աննեղի ու նզովքի թունոտ բառեր չգործածեց: Նա վառ հավատ ուներ, որ հայ ժողովուրդը պայքարի չի գտնվի «թէպի իւր շահերին նւիրած դատակները»^{**}): Բերում ենք նրա երկրորդ խնդրագիրը.—

Խովհաթի Հայոց Բարեգործական Ընկերությանը

Խեղդագիր

Ութ տարի կայ, որ ես ուսուցչական ապարիզից դուրս մղվելով, ապրում էի իմ գրչության, իմ գրական աշխատություններովս: Սակայն այս ապարիզում ևս ես հալածանք կրեցի և իմ դասագրքերս արգելվելով՝ զրկեցի վերջին կտոր հացից: Բաղաքում այլևս ապրելու հնար չունենալով՝ քաշեցայ գիւղ, զրկելով երեսանցս ուսումնառությունից և կրթությունից, բայց այս հերիք չէր, այդտեղ էլ ընկայ վաշխառուների ճանկը: Այս և ուրիշ ընտանեկան հանգամանքներից ստիպւած՝ մի յայտարարութիւն տւի, (որ տպեց Մշակում), թէ վաճառում եմ իմ գրաւոր աշխատություններս հեղինակության իրաւունքը հինգ հազար մանէթով տարեկան

հազար մանէթ ստանալու պայմանով հինգ տարւան ընթացքում: Սրա վրայ ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց և մինչև անգամ ձախ ու ծուռ մեկնություններ ստացաւ զանազան խորշերում և անկիւններում: Լաւ գիտեմ, որ ես այս օրը չէի ընկնիլ, եթէ մեր գրողները որքան և իցէ ազնիւ և անկեղծ զգացում ունենային: Վկայում եմ առաջի պատկառելի Խորհրդիդ— և թող իմ այս վկայութիւնը մի յիշատակ մնայ Ձեր գրաւոր գործերում—որ մեր ժամանակի գրականութիւնը ապականւած է զգելու շահի, դրանում խեղդւած է խղճի և ճշմարտութեան ձայնը: Չր պատկանելով մեր գրական խմբակներից ոչ մէկին,

^{*}) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիւ, ֆոնդ, № 28, գործ № 8, էջ 1:

^{*}) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիւ, ֆոնդ, № 30, գործ № 5:

^{**}) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիւ, ֆոնդ, № 28, գործ № 8, էջ 1:

այսօր ինձ հալածելում ամենքն էլ համամիտ
և համաձայն են:

Երեսուն տարուց անլի է, որ ինձ ծառայում
եմ մեր ազգային դրականության և դաս-
տիարակությանը՝ ոչ թե պլանայականության
համար քարշ գալով սրա նրա ետևից, այլ
անկախ և ինքնուրույն, կրելով ամեն տեսակ
զրկանքներ և նեղություններ, մշակելով մի
բոլորովին խոսկանացած անդամստան: Մեծ
ցաւ կը լինի ամեն անկեղծ սրտի համար,
եթէ հայ ազգը ապերախտ դռնի դէպի իւր
շահերին նւիրած զաւակները: Ժամանակ է
օրինակ առնել մեղեցությունից յարութիւն ա-
ռած ազգերից, իմանալ, թէ որպիսի երախ-
տագիտութեամբ են հասել դրանք այդ աս-
տիճանին, այդ բարօրութեանը: Մեր ամե-
նամեծ պակասությունն այն է, որ չենք գնա-
հատում, չենք պատում մեր բարերարներին,
այն անձինքներին, որոնք իրանց անձն ու
գանձը չեն խնայում ազգից: Մենք սովոր ենք
դրանցից մէկին խենթ, միւսին փառասէր ան-
ւանելու: Այսպէս չեն միւս ազգերը, նրանք
փառաւոր արձան են կանգնեցնում թէ յետին
ձկնորսի համար, որ չի խնայել իր անձը հա-
զար ու մի արկածների մատնել իր հայրենի-
քի սիրոյն համար, և թէ այն մարդու, որ իր
զանձով բարեգործական հաստատութիւններ
է հիմնել: Այլովս տեսել եմ հա Աթէնքի ազ-
գային թանգարանը, ուր և թափել եմ ամե-
նայորդ արտասուք, համեմատելով իմ ազգի
ապերախտութիւնը այս ազգի անսահման ե-
րախտագիտութեան հետ: Առաքելութիւնն ա-

ծել կարող չէ՝ այնտեղ, ուր նա ոչ միայն չի
զնահատում, այլ և հալածում էլ է:

Մինչև այսօր ես ոչ մի բարերար, ոչ մի
մեկեմաս ունեցած չեմ, ինչ որ կամ, ինձա-
նով եմ եղել, ինչ որ արել եմ, իմ ներքին,
հոգեկան դրդումիցն իմ արել: Բայց այսօր
թէ և ոչ հոգով ու սրտով, ոչ խելքով ու մտ-
քով, այլ ֆիզիկապէս ծերացել եմ, նւթա-
կան ամապահովութիւնից չափից դուրս ճըն-
շել, շատ անգամ թուլթ ու թանաք անգամ
չեմ ունենում: Ոչ այնքան իմ, որքան իմ զա-
ւակներս սիրոյն համար ստիպւած եմ իմ
այս դառն հանգամանքը Ձեր առջև դնելու,
յուսալով որ դուք մի ելք կը գտնէք, եթէ Ըն-
կերութեան ծրագրից և կանոններից դուրս
չէք համարիլ ինձապէսների վրայ ուղարկութիւն
դարձնելու: Ինձ հարկատր է այժմ միանազ
նպատակ մինչև հիմա հարկու մանէթ, որի փո-
խարէն ես կարող եմ Ընկերութեան կարգա-
դրութեան յանձնել զանազան գրքեր իմ աշ-
խատութիւններից: Իմ նեղութիւնն առժամա-
նակեայ է, ես յոյս ունիմ, որ շուտով դուրս
կը գամ այս ինձ համար անսպասելի թշա-
ուութիւնից և լաւ օրերի կարժանանամ: Ես
նոյնիսկ էջմիածնին մեծ ծառայութիւն եմ
արել թէ իբրև խմբագիր «Արարատ» ամսա-
գրի և թէ բարենորոգելով նրա տպարանը:
Գէորգ կաթողիկոսը զնահատեց իմ աշխա-
տութիւնը և հայրական խնամք էր տանում
ինձ վրայ: Յոյս ունիմ, որ նրա արժանաւոր
յաջորդներն ևս անուշադիր չեն թողնիլ իմ
վիճակը, առ որ դարձնելով Խորհրդի մտա-
դրութիւնը

մնամ խոնարհ ծառայ Դազարու Աղայեան

12-ին դեկտեմբերի 1892 ամի

(Թիֆլիս*)

Աղայանի սույն խնդրագրի վրա կա հե-
տևայլ մակագրությունը.—

Վճիռ Խորհրդի 12 դեկտ. 1892 թ. ար-

ձանագրութիւն № 29

տալ 300 ռուբլի, փոխարէնն ստանալ գրքեր:
Հ. Ա.

Սակայն Դազարու Աղայանի հույսերը, որ
իր «նեղութիւնն առժամանակեայ է», չարդա-
րացան: Նյութական ամապահով վիճակը շա-
րունակվեց նաև հետագայում: Եվ ահա Դա-
զարու Աղայանին որոշ չափով նյութապէս
օժանդակած լինելու համար Թիֆլիսեցի երեք

գրասեր տիկիներն նախաձեռնում են կատա-
րելու Աղայանի գրական գործունեության քա-
ռանամյա հոգեւոյնը: Կազմակերպվում է
հոգեւոյնական հանձնաժողով, որի անունից
1902 թ. ապրիլի 2-ին դիմում է արվում Ա-
մենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա-ին,
խնդրելով օրհնել իրենց ձեռնարկը: Բերում
ենք այդ դիմումը.—

*) շՍՍՌ Պետական կենտրոնական արխիւ, ֆոնդ,
№ 28, գործ № 3, էջ 1:

Վեհափառ Տէր,

Այս տարի մայիսի 10-ին լրանում է մեր տաղանդաւոր վիպասան, բանաստեղծ, մանկավարժ Ղազարոս Աղայեանի գրական գործունէութեան քառասունամեակը: Տեղումս համակրողներէից կազմել է մի մասնաժողով այդ բեղմնաւոր քառասունամեակը բնութենէ բար տոնելու նպատակով:

Ի դիմաց մասնաժողովի Ձերդ Վեհափառութեան խոնարհ աղախիններ

Իշխանուհի Մարիամ Թումանեան,
Սոֆիա Քալանթարեան,
Սոֆիա Բարսեղեան*)

Պահել է նաև Մկրտիչ Ա. կաթողիկոսի (Խրիմյան Հայրիկ) նույն թվի ապրիլի 25-ին գրած № 612 կոնդակի սեւագրութեամբ, որտեղ բանաստեղծ կաթողիկոսը ողջունելով հոբելյանական հանձնաժողովի նախաձեռնութիւնը, իր ուրախութիւնն է հայտնում Ղազարոս Աղայանի գրական գործունեության քառասունամյա հոբելյանի տոնման առթիւ: Իր այս կոնդակով բանաստեղծ ու գրասէր Հայրիկը ջերմ խոսքերով գովատում է Ղազարոս Աղայանի մատուցած ծառայութիւնները հայ գրականութեանը և մանկավարժութեանը և ցանկութիւն է հայտնում, որպէսզի նա անցյալի եռանդով շարունակի իր գրական, մանկավարժական արդյունավետ գործունեութիւնը և հանդես գա ծնորդութեամբ գարշաբեալ: Խրիմյան Հայրիկը չի մոռանում օրհնել նաև նրանց, որոնք համակիր են, որոնք խրախուսում ու աջակցում են հայ գրական անդամատանի բեղմնաւոր ու անխնայ մշակներին: Հատկապէս նրան մեծ ուրախութիւն էր պատճառել այն հանգամանքը, որ հոբելյանի նախաձեռնութիւնը իրենց ձեռքն են վերցրել կանայք, «բարեջան անդամուհիք Յոբելիանական մասնաժողովի, որք քան զամուսինս իրեանց յառաջադէմք երեւցան»: այստեղ թերևս Հայրիկը ամուսիններին մատնացուց անելով ակնարկում է հայ հասարակական-գրական այն գործիչներին, որոնք խմբակային նեղ-հասարակական հաշիւներով

Վեհափառ Տէր, դիմելով Ձեզ, խոնարհաբար խնդրում ենք առաքել մեզ Հայրապետական օրհնութիւն Սուրբ Իշման տեղից՝ իբրև գրական մեր ձեռնարկած գործի հաջողութեան, որի նպատակն է մեր ալեգարդ և վաստակաւոր գործչի ծերութեան օրերը փոքր ինչ ապահովելը:

տարված ձեռնպահ էին մնացել Աղայանի գրական գործունեության քառասունամյակը նշելու նախաձեռնութիւնից: Մեծ գովեստով է խոսում Հայրիկը հասարակական աշխատանքներին կանանց մասնակցութեան մասին և առանձին գոհունակութեամբ արձանագրում է իր կոնդակով այդ փաստը.— նրանք ցեղացին թէ կրթեալ և զարգացեալ հայ Տիկինն ևս կարէ գործել ի հրապարակի, իբրև այդ գոտեպիւնդ, ահա այս է միխթարականն և գովելին»:

Բանաստեղծ կաթողիկոսը ուրախութիւն է հայտնում այն առթիւ, որ հայ ժողովուրդը արդեն զգում է իր մշակների արժանիքները ու քնահատում նրանց, գիտակցելով, որ գրականութեան ասպարեզում աշխատողների թիվը քիչ է և դժվարին գործ է շարքից դուրս եկածներին փոխարինողներ գտնելը.— «Համակրելին այդ գործ յոյժ սիրելի գոյով Մեզ, — գրում է ծերունագարդ կաթողիկոսը, — և միանգամայն ուրախալի, յորմէ տնտեսիմք զի Հայոց ժողովուրդն տակաւ առ տակաւ զգայ զարժանիս ծառայողաց իւրոց և զնահատէ զնոսայ վարձատրելով թէ բարոյապէս և թէ փոքր ի շատէ նիւթապէս և զգայ նույնպէս եթէ սակաւք են այժմ ի հրապարակի գրականութեան Մերոյ և դժուարին փոխանակողք անցաւորաց...»:

Բերում ենք Խրիմյան Հայրիկի այդ կոնդակը:

Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Բաղմաստատակ մշակի յանդաստանի ազգային Գրականութեան մերոյ և յասպարիզի Մանկավարժութեան Յարգելի պ. Ղազարոսի Աղայեան, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն Տիրաւանդ հանդերձ Հայրապետական օրհնութեամբ:

Ի թղթոյ երկց ազգանուէր և բարեգործ Տիկնաց, այն է Իշխանուհի Մարիամու Թումանեանց, Սոֆիայի Բարսեղեան և Սոֆիայի

Քալանթարեան, հաւաստի եղև Հայոց Հայրիկն եթէ համակիրք արդիւնաշատ վաստակովդ և զնահատողք ազգային բարեխիղճ գործատրաց կազմելով մասնաժողով մի ցանկան տօնել զքառասունամեայ վատապէս պ. Աղայեանցիդ և խնդրեն զօրհնութիւն ի

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիւ, ֆոնդ, № 56, վարչական բաժին, գործ № 295:

Մայր Տաճարէս և ծերունի Հայրապետէս: Համակրելին այդ գործ յոյժ սիրելի գոյով Մեզ և միանգամայն ուրախալի, յորմէ տեսանիմք զի Հայոց ժողովուրդն տալաւ առ տալաւ զգալ գարծանիս ծառայողաց իւրոց և զնահատէ զնոսայ վարձատրելով իմ բարոյապէս և թէ փոքր ի շատէ նիւթապէս և զգալ նոյնպէս եթէ սակաւք են այժմ ի հրապարակի գրականութեան Մերոյ և զժողովրդին փոխանակողք անցաւորաց, Մեր միանգամայն ի հանդիսաւոր տօնի յոքելինիզ մասնակցիմք տօնողաց զտօն պ. Ղազարոսիդ թէ զուրցէ փոքր ինչ կենդանացես և յարիցէ ի Քեզ զնախկին եռանդն քո և կորով և այսու Հայրապետական Կոնդակաւ օրհնեմք զվաստակս վաստակաւորիդ որ նուիրեսցիր զոյժդ և զաշխոյժդ երիտասարդութեանդ աղքատիկ գրականութեան մերոյ ևս առաւել մանկավարժական ուղղութեամբ աղքատիկ աշակերտաց մերոց:

Օրհնեալ Դու և վաստակք Քո, օրհնեսցիր յաւատարդիւնաւոր կեանք քո: Եթէ այսօր ծերութիւն և ժամանակն ճնշեալ է զՔեզ և դու լոնալ կաս, ի հրապարակի, յուսամք զի սի-

րալիր աջակցութիւն, խնդակցութիւն և ձեռնտութիւն հասարակութեան Մերոյ վերստին զարթուցէ ի Քեզ զանցեալն և Դու դարձեալ ի հանդէս եկեսցես նորափետուր զարդարեալ:

Օրհնեմք նոյնպէս զհամակրողքս քո, որ շուրջ զՔե առեալ խնդան այսօր բնդ անցեալդ և խրախուսեն զՔեզ, ցնծութեամբ և պատուով: Օրհնեալ և բարեջան անդամուհիք Յոբելիական մասնաժողովի Քո, որք քան զամուսինս իւրեանց յառաջադէմք երեւցան և ցուցին. եթէ կրթեալ և զարգացեալ հայ տիկինն ևս կարէ գործել ի հրապարակի իբրև այլ գօտեպիւնդ, ահա այս է միջիթարականն և գովելին. օրհնեսցիր յԱստուծոյ և ի մէնջ ինքեանք և ջանք նոցին:

Իսկ վասն Քո Մաղթէ բանաստեղծ և գրասէր Հայրիկն, կա՛ց, մնաց յաւատ այդու եռանդեամբ փառաւորեալ գործովք Քո, յուսա ի քաջալերութիւն սիրեցեալ ազգին քո և իմոյ և արն ունիւր յաւատնական վարձուց երկնաւոր պսակողին, որ ասէ, «Եկա՛ք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»: Ամէն*):

Լավ օրերի իղձը սրտում, 1911 թվի հունիսի 20-ին Ղազարոս Աղայանը գերեզման իջալ, հետնորդ սերունդներին կտակելով երբեք չմոռանալ այն գործիչներին, որոնք իրենց գրիչը նվիրել են հարազատ ժողովրդի շահերի պաշտպանութեանը, ալլապես «մեծ ցաւ կը լինի ամեն անկեղծ սրտի համար, — գրում է նա, — եթէ հայ ազգը ապերախտ գտնուի դէպի իւր շահերին նւիրած գլուխները»:

Եվ հայ ժողովուրդը չի մոռացել ու առան-

ձին երախտագիտութեամբ է հիշում այսօր հայ գրական ու մանկավարժական անդամանի անխոնջ մշակին: Այսօր, Աղայանի սովետական ծաղկուն հայրենիքում նրա երկերը հրատարակվում են մեծ տիրաժներով, իսկ մանկավարժական հայացքները արժանանում լուրջ գիտական ուսումնասիրության:

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ, N 56, գործ N 295, էջ 38:

